

ձնեցին եպարքոսին, որ եւ հրաման ըրաւ, թէ Սարգիս Քիոս կղզւոյն վրայ ազատ թողուի. բայց անկէ դուրս չելէ: Յակոբ այն հրովարտակը Սարգսին ղըկեց, հետն հարիւր ալ ոսկի, եւ սփոփական նամակ մ'ալ գրեց որ քիչ ատենէն բոլորովին կ'ազատի. նոյնպէս Սարգսին բարեկամներն իրեն նամակներ գրեցին եւ զինք մխիթարեցին:

Նոյն միջոցին նոր հրովարտակը շաշաճ ըլլալով, ազատ թողուց զՍարգիս, եւ ինք Պոլիս դարձաւ հետը բերելով Սարգսի նամակները, զորոնք բաժնեց: Սարգիս սկսաւ այնտեղ Յոյներու հետ կենակցիլ, բարեկամանալ եւ հանգիստ գտաւ: Սակայն Յակոբ հակառակ խոստմանը՝ չէր աշխատեր բոլորովին ազատելու հրովարտակն հանել տալու, Սարգսի գրած նամակներն ալ անպատասխանի կը մնային: Ասան զի Սարգսի նամակները, զոր յոյն նաւաստիներու ձեռք Պոլիս կը ղըկէր, Յակոբայ լրտեսները կ'առնուին. ասոնք կ'երթային եւ նաւաստիներուն լալով կ'ըսէին, թէ արդեօք Քիոսէն իրենց քսորեալ վարդապետ ազգականէն հայագիր նամակ ունին. նաւաստիներն ալ միամտութեամբ կը յանձնէին, լրտեսներն ալ առանց բանալու Յակոբայ կը տանէին, սա ալ կը ջնջէր: Սարգիս իմանալով եղածն՝ իշխանաց ուղղած նամակները յանձնեց նաւաստիի մը՝ սոյն նաւաստիին եղբօրը հասցէն վրան գրելով, որ եւ նամակները իրենց հասցէին հասցուց: Իշխանք ասոր վրայ եւս առաւել խռովելով՝ Յակոբայ գացին եւ ստիպե-